ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի բյուջեի ձևավորումը

Հանձնաժողովի 2016 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.7 գործակցով: Օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների պահպանում	
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	**735 229.0**
Աշխատանքի վարձատրություն	617 027.3
Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում, դրամաշնորհներ, սոցիալական նպաստներ եվ կենսաթոշակներ, հարկեր, պարտադիր վճարներ	118 201.7
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այդ թվում՝ հիմնական միջոցներ	**29 933.5**
Ընդամենը ծախսեր	**765 162.5**